

ազգին իմոյ, սակս այսորիկ լաւագոյն համարեցայ խոյս տալ ի Աստուանգնուպօլսոյ, որպէս յայտ է բոլոր ազգին իմոյ, ի ճշգրիտ վկայութեանց դեսպանացն Գաղղիոյ եւ Նապօլսոյ, զորս ունիմ ընդ իս: Եւ առ այժմ որովհետեւ գտանին անձինք ոմոնք ի Անէտիկ, որք սպասեն գնալոյն իմոյ անդ, յօժարութեամբ վասն ոմանց մասնաւոր գործառութեանց իմոց, յորոց ազատացեալ Աստուծով գիտաւորութիւն ունիմ գալոյ այդք առ ի մատուցանել յյարգութիւն իմ համբուրիւ սրբազան ոտին ամեներջանիկ Աւհապետին նաեւ Ասեմայարգոյից, եւ քուճի Գերապայծառութեան:

Գերապայծառութեան քուճ

ի յալիկուռնա Փետրվարի 8, 1773

ամենախոնարհ ծառայ

Սարգիս Աբբեպիսկոպոս:

Միեւնոյն ժամանակ Սարգիս պիմած է նաեւ այլեայլ ազգեցիկ անձանց միջնորդութեան: Այսպէս 20 Մարտ 1773 թուականաւ Fra Giuseppe M^o. Dobbia Min. Conv. ստորագրող փրանկիսկեանը կը գրէ Հռոմէն առ Սարգիս, թէ միսիոնէ ետ դարձած ըլլալով՝ Աբբեպիսկոպօլսոյ եւ Վ.Պոլսոյ վրայ տեղեկութիւններ տուեր է Սրբազան Քահանայապետին, ի մասնաւորի Հայոց վրայ, որոնք մէտ են ի կաթողիկէութիւն, եւ ըսեր է թէ աւելի ընդարձակ եւ ճիշտ տեղեկութիւն կրնայ տալ Սարգիս Աբբեպիս, զոր թէպէտ անձամբ ճանչցած չէ, բայց համբաւը գիտէ. եւ թէ ըսուեր է Սարգիսի մասին՝ թէ Սրբազան Քահանայապետը շատ սիրով